ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2017թ. ապրիլի 28 N 106 - Ա

ԱՆԱՀԻՏ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԱԳԱԾԱՎԱՆԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109–րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար 2017 թվականի ապրիլի 25-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ա. Տեր-Մարտիրոսյանի 2017 թվականի ապրիլի 27-ի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

2017 թվականի ապրիլի 28-ից Անահիտ Արշալույսի Տեր-Մարտիրոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2016 թվականի դեկտեմբերի 29-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ